

օրենքով սահմանված բազային տուրքի նկատմամբ:

«Պետական տուրքի» մասին օրենքի 9-րդ հոդվածի 9.4 կետի համաձայն՝ «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված որոշումների բողոքարկման հետ կապված վեճերով՝ պետական տուրքը գանձվում է բազային տուրքի 50-ապատիկի չափով:

Նշված հոդվածների վերլուծությունից հետևում է, որ օրենսդիրը դատական ծախսերի մեջ ընդգրկել է նաև պետական տուրքի գումարը, որը հաշվարկվում է օրենքով սահմանված կարգով: Նման հաշվարկի հիման վրա է որոշվում օրենքով սահմանված և պարտադիր վճարման ենթակա պետական տուրքի չափը:

Տվյալ պարագայում Հայցվորի կողմից նախապես վճարվել է 50,000 ՀՀ դրամի չափով պետական տուրք, ուստի Դատարանը գտնում է, որ պետական տուրքի հարցը պետք է համարել լուծված՝ ելնելով բավարարված պահանջների համամասնության կարգով պետական տուրքի բռնագանձման սկզբունքից:

-

(IV) Եզրափակիչ մաս

Հիմք ընդունելով վերոգրյալ իրավական և փաստական հիմքերը և հիմնավորումները, ինչպես նաև ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 3-րդ, 109-րդ, 179-րդ, 189-րդ, 191-րդ, 192-րդ, 198-րդ, 362-րդ հոդվածներով և 27.2-րդ գլխով՝

Վ Ճ Ո Ւ Յ

1. «ԱՐ ՋԻ ԸՆԴ ԷՅ ՋԵՅ գրուպ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության հայցն ընդդեմ «Սուրբ Աստվածամայր բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության (այսուհետ նաև՝ Պատասխանող)՝ «Սուրբ Աստվածամայր բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի տնօրենի՝ «ԱՐ ՋԻ ԸՆԴ ԷՅ ՋԵՅ գրուպ» ՍՊ ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին 12.11.2024թ.-ին կայացված թիվ ՍԱ-631 որոշումը անվավեր ճանաչելու (վերացնելու) պահանջի մասին, մերժել:

2. Դատական ծախսերի հարցը համարել լուծված:

3. Վճիռն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից և կարող է բողոքարկվել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարան՝ հրապարակման օրվանից մեկամսյա ժամկետում:

Դատավոր՝ **Մալվինա Հարությունյան**



Սույն փաստաթղթի իսկությունը հնարավոր է ստուգել <https://verify.e-gov.am> կայք
ում մուտքագրելով IEDA-9910-4773-ABEF հսկիչ համարը կամ սքանավորելով QR կոդը:

Տվյալ ֆայլերին կարող եք ծանոթանալ նաև մուտք գործելով "Էլեկտրոնային դատավարություն" համակարգ՝
cabinet.armlex.am